ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

17.11.2016թ.
307-ի 2

Արագածոտնի մարզպետ
պարոն Գաբրիել Գյոզալյանին

# Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Գյոզալյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. 2016թ.-ին հունվարի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը Ձեր ղեկավարած գերատեսչության աշխատակիցներից ըստ հաստիքների ովքե՞ր են պարգևատրվել եւ ինչքա՞ն գումարով (ի՞նչ նվերով):
2. Որքա՞ն է կազմել աշխատակիցների ստացած դրամական պարգևատրումների ընդհանուր գումարը:
3. Ընդհանուր քանի՞ աշխատակից է պարգևատրում ստացել:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ նախագահ
Լիանա Դոյդոյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ


0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51
0201 г.Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51
0201 c. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am


________________N________________

*Ձեր 17.11.2016թ. թիվ 307-ի 2 գրության*

**ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՏՐՈՆ**

**Հ/Կ ՆԱԽԱԳԱՀ Լ.ԴՈՅԴՈՅԱՆԻՆ**

**Հարգելի Դոյդոյան**

Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ Արագածոտնի մարզպետարանում 2016թ. հունվարի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում դրամական պարգևատրումներ են ստացել մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմի թվով 13 աշխատակից՝ 1348003 դրամ գումարով և 91 քաղաքացիական ծառայող՝ 30846700 դրամ գումարով:

Այսպիսով ՝ թվով 104 աշխատակից ստացել են 32194703 դրամ պարգևատրում:

Հարգանքով՝

**Գ. ԳՅՈԶԱԼՅԱՆ**

Կատարող՝ Մ. Գրիգորյան

023231944